

7.

ՏԵՍԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ECONOMICS  
ЭКОНОМИКА

**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՐՏԱՂՐԱԿԱՆ ԶԵՂՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Ա. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*

*գործ պրոֆեսոր*

**Վ. Հ. ԱՊՐԵԼՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Բիզնեսի կառավարումը մրցակցային առավելության ապահովման պահանջման այլանկորպած գործողությունների ամբողջությունն է: Դետևաբար, որպեսզի կազմակերպությունը իր մրցակցային դաշտում հասնի առավելության, պետք է ընտրի իր ռազմավարությունը՝ մի կողմից պատկերացում ունենալով գործունեության ուժեղ և թույլ կողմերի մասին, մյուս կողմից՝ ճիշտ ըմբռնելով ինչպես ազգային տնտեսության, այնպես էլ այն ճյուղի առանձնահատկությունները, որին պատկանում է կազմակերպությունը:

Ճիշտ է նկատում Ի. Անսոֆֆը, որ սիներգետիկ ռազմավարության մշակման հիմնախնդիրը կապված է կառավարման ճկունության և սիներգիզմի հակասությունների հետ: Կառավարման ճկունության բարձրացումը նպաստում է շահույթի ստացմանը և սիներգիզմին: Տվյալ ռազմավարության համար գլխավոր վտանգ է ճկունության պակասը, հնարավոր փոխգիշման և դրա հետևանքով որոշումների ընդունումը: Այս թերությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ արժեքային առավելության վրա՝ հասցնելով այն նվազագույնի:

Մրցակցային ռազմավարությունը բարդ հարաբերությունների համակարգ է, որի ուսումնասիրությունը պահանջում է կազմակերպության վաճառքի ծավալի, շահույթի, արտադրանքի (ծառայության) ինքնարժեքի, դրամական հոսքերի, կառավարման ոճի և ընդհանրապես գործունեության կարևորագույն ռազմավարական ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության ստացում և գնահատում: Դաշվի չառնելով տվյալ կազմակերպության գործունեության վերլուծության իրականացման առանձնահատկությունները՝ կարելի

է առանձնացնել տիպային մի շարք ուղղություններ.

- ձեռնարկության գործունեության նպատակը,
- պորտֆել պատվերը, նոր արդյունքը,
- ձեռնարկության ռեսուրսային հնարավորությունները,
- ծախսերի (հնքնարժեքի) գործոնային վերլուծությունը,
- ֆինանսական միջոցների մատչելիությունը, միջոցների հնարավոր աղբյուրները,
- կառավարման համակարգը, կառուցվածքը, կառավարիչների որակավորումը, անձնակազմի մոտիվացիան, կառավարման կուլտուրան, ավանդույթը և այլն:

Ակնհայտ է, որ մրցակցային ռազմավարության մշակման հիմքում ընկած է կազմակերպության ընթացիկ գործունեության վերլուծությունը, իսկ գլխավոր հիմնախնդիրն այն է, թե ինչպես գնահատել գործունեության արդյունավետությունը, որպեսզի կազմակերպության շահույթի ապահովումը երկարաժամկետ լինի: Յայտնի է, որ արդյունավետության գնահատման ցուցանիշներ կարող են հանդիսանալ շահութաբերությունը, ռիսկի մակարդակը, շուկայի բաժինը, ակտիվների արժեքը, նոր արտադրանքի ծավալը, արտադրողականությունը և այլն: Սակայն տնտեսվարման նոր պայմաններում որպես արդյունավետության ցուցանիշ է վերցվում շահույթի մեծությունը կամ շահութաբերությունը, մինչդեռ դրանց միաժամանակյա ապահովումը բարձրացնում է ռիսկի աստիճանը:

«Արյունք-ռիսկ» ֆունկցիոնալ կապը ցույց է տալիս, որ շահույթի մեծությունը և դրա ստացման հավանականությունը գտնվում են հակադարձ կապի մեջ<sup>1</sup>: Բացի դրամից, շահութաբերության մակարդակը կախված է ոչ միայն արտադրանքի գնի և նրա հնքնարժեքի կառուցվածքից, այլ նաև շրջանառու կապիտալի պտույտների արագությունից:

Ինչ վերաբերում է կազմակերպության գործունեությունից երկարաժամկետ շահույթ ստանալու ուղղների գնահատման ցուցանիշների որոշմանը, ապա դա ռազմավարական կառավարման բարդ հիմնախնդիրներից է, քանի որ ձեռնարկությունն ամեն անգամ պետք է սահմանի առաջնային հիմնախնդիրները, որոնց լուծման դեպքում կարող է ապահովել առավելագույն շահույթ: Այսպես, բարձրացնել թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների մոցունակությունը, ստեղծել նոր ապրանքներ, իջեցնել արտադրա-

<sup>1</sup> Стю, Алексеева М. М. Планирование деятельности фирмы. Учебно-методическое пособие.-М.: Финансы и статистика, 1997.

կան ծախքերը՝ կախված կոնկրետ իրավիճակից, ձեռնարկության նպատակ-ների իրականացման և այլ գործոններից:

Ուզմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիել ձեռնարկության ստեղծման պատմությունը, պարզել՝ ինչ ճանապարհով է այն հասել հաջողության կամ որն է նրա անհաջողության պատճառը: Իսկ ռազմավարության ընտրման գործընթացը ենթադրում է բացահայտել ձեռնարկության՝

- անցյալ և ընթացիկ ռազմավարությունը,
- ռազմավարական իիմնախնդիրները,
- կազմակերպչական հնարավորությունների և սահմանափակումների հարաբերակցությունը,
- ֆինանսական հնարավորությունների սահմանափակումների հարաբերակցությունը,
- կազմակերպչական ճկումությունը,
- ուժեղ և թույլ կողմերը:

Ուզմավարական իիմնախնդիրը ձեռնարկության թույլ կողմերից տարբերվում է նրանով, որ դրանք բացահայտվում են մրցակից ձեռնարկությունների իիմնական տնտեսական գործունեության արդյունքները համեմատելիս:

Հիմնախնդիրներ առաջանում են, եթե անհամապատասխանություն է նկատվում առաջադրված նպատակին հասնելու ընթացքում: Հետևաբար ռազմավարական իիմնախնդիրը ենթադրում է ընթանական հասկերաբեր ընթացիկ հիմնախնդիրը միաժամանակ կարող է բացահայտել դրանց լուծման մեթոդները: Այսպիսով՝ հիմնախնդիրը միաժամանակ կարող է բացահայտել ձեռնարկության ինչպես թույլ կողմերը, այնպես էլ զարգացման հնարավորությունները: Պարզ է, որ ռազմավարական իիմնախնդիրներն ընդհանրապես վերացնել անհնար է (բացառապես հիմնախնդիրի հությունը), և դրանք կարող են խոչընդոտել ձեռնարկության ռազմավարության իրականացմանը:

Ձեռնարկության կազմակերպչական հնարավորությունները, ինչպիսիք են կառուցվածքը և կառավարման համակարգը, ծևավորված կորպորատիվ նշակույթը և սովորույթները, աշխատանքի մոտիվացիոն համակարգը, կառավարչական «անձնակազմը» ցանկացած իրավիճակում կարող են լինել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի աղբյուր, որին սովորաբար կարող են առնչվել նոր ծևավորվող ձեռնարկությունները, որտեղ դժվարանում է կառավարման գործընթացը:

Ձեռնարկության ռազմավարության մշակման կարևոր խնդիրներից է

նրա ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը, ինչպիսիք են հարկերի վճարումը, պարտքերի ու պարտավորությունների կառուցվածքը և այլն: Դամաձայն արտասահմանյան մերողիկաների՝ այս փուլում անհրաժեշտ է սահմանել ծեռնարկության հնարավորությունները ներդրումային միջոցների և դրամական հոսքերի ասպարեզում, այսինքն՝ վերաբաշխել ներդրումներն ըստ ռազմավարական բիզնես-միավորումների, շահարաժնի վճարման, երկարաժամկետ վարկերի տրամադրման և այլն: Ֆինանսական հնարավորությունների ու պարտավորությունների իրական գնահատումը ծեռնարկությանը հնարավորություն է ընձեռություն ընտրելու ժիշտ ռազմավարություն:

Դաջորդ կարևոր գործոնը, որը հնարավորություն է տալիս ընտրելու ռազմավարությունը և փոքրացնելու ռիսկը, կառավարման ծկունությունն է, որին հնարավոր է հասնել մի քանի ճանապարհով: Առաջինը դիվերսիֆիկացիան է, որի շնորհիվ ծեռնարկությունը կարողանում է հարմարվել շրջակա միջավայրի փոփոխությանը: Մյուս ուղին աշխատավիցների ուսուցումն է արտադրությունը ծկուն դարձնելու նպատակով, որը հնարավորություն է տալիս ծեռնարկությանն արագ արձագանքել շուկայական տատանումներին և գնահատել կառավարչական այլընտրանքները:

Ռազմավարության մշակման վճռական փուլը և նպատակը ծեռնարկության ուժեղ և թույլ կողմերի սահմանումն է: Դայտնի է, որ ծեռնարկության ուժեղ և թույլ կողմերը կարելի է որոշել հետևյալ մոտեցումներով.

1. Ներքին, երբ այն սահմանվում է ծեռնարկության փորձի և աշխատակիցների կարծիքների հիման վրա:

2. Արտաքին, երբ սահմանվում է մրցակիցների հետ համեմատությամբ:

3. Նորմատիվային, երբ սահմանվում է փորձագետների և մրցակիցների կարծիքներով:

Այսպիսով՝ ծեռնարկությունը, բացահայտելով իր ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն է ստանում հասնելու մրցակցային առավելության:

Ինչ վերաբերում է ռազմավարական կարողություններին, ապա դա գոյություն ունեցող միջոցների և հնարավորությունների ամբողջություն է, որի շնորհիվ մշակվում և իրացվում է ծեռնարկության ռազմավարությունը:

Որոշ տնտեսագետներ գտնում են, որ «Զեռնարկության կարողությունները» վերացական հասկացություն է: Դրանց սահմաններն անորոշ են, գործոնները՝ անհայտ, իսկ ազդեցությունը՝ միջինացված: Սակայն այս հասկացությունը կոնկրետ է, քանի որ ցանկացած կառավարչական որոշում կարող է դրա-

կանորեն կամ բացասականորեն ազդել ծեռնարկության վրա<sup>2</sup>:

Ակնհայտ է, որ ռազմավարական կարողություն ծևավորում են ոչ միայն միջոցները, որոնք կարող են փոփոխվել ռազմավարական որոշումների իրացման ժամանակ, այլ նաև պայմանները, որոնցում իրագործվում է ծեռնարկության գործընթացը և ենթակա է անընդհատ փոփոխության: Չեռնարկության գործունեությունը իրականացվում է անվճարունակության պայմաններում, իսկ ռազմավարական միջոցներն են փողը և այլ բարձր լիկվիդային միջոցներ, մինչեւ նորմալ տնտեսական գործունեության պայմաններում ռազմավարական են այն բոլոր միջոցները, որոնք ծեռնարկությանը հնարավորություն են ընձեռում ստանալու մրցակցային առավելություն:

Մեր կարծիքով՝ մրցակցային ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծեռնարկության տնտեսական կառողության ցուցանիշներին, քանզի այդ ցուցանիշներն են բնութագրում նրա դիրքը և տեղը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Այդ ցուցանիշների թվին են պատկանում ծեռնարկության ակտիվները, վաճառքի ծավալը, համախառն կամ զուտ շահույթի ցուցանիշը, գրաղվածության մակարդակը, ծեռնարկության գիտատեխնիկական ներուժը և այլն: Ստորև՝ այդուսակ 1-ում, թերված են հանրապետության մի շարք արտադրական ծեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության արդյունքները:

Յարկ է նշել, որ արդյունավետ մրցակցային ռազմավարության մշակման փուլ է ապրանքային ռազմավարության իրականացումը: Յայտնի է, որ ցանկացած ապրանք իր հատկություններով պետք է բավարարի սպառողների արտադրական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլ պահանջնունքները, ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ կոլեկտիվ պահանջմանընթացքում ըստ որում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ կոլեկտիվ պահանջմանընթացքում է, որ արտադրանքի իրացման ժամանակ սպառողը դիտարկում է արտադրանքի սպառողական հատկությունների անբողջությունը:

Տնտեսական պրակտիկայում գոյություն ունեն ապրանքային ռազմավարության իրագործման հետևյալ այլընտրանքային տարրերակները.

- ապրանքի սպառողական հատկությունների ավելացում,
- թողարկվող արտադրանքի անվանացմանի և տեսականու ընդլայնում:

Հաշվի առնելով ապրանքի (արտադրանքի) սպառողական հատկությունների ավելացման ռազմավարության մշակման միջազգային փորձը և ար-

<sup>2</sup> Steу Клейнер Г. Б., Тамбовцев В. Л., Качалов Р. М. Предприятие в нестабильной экономической среде: риски, стратегии, безопасность.-М.: Экономика, 1997.

տադրական ծեռնարկությունների առանձնահատկությունները՝ մեր կողմից մշակվել է մրցակցային ռազմավարական մոտեցում, որը նախադրյալներ կստեղծի արտադրական ծեռնարկություններում թողարկվող արտադրանքի վերաբերյալ առաջարկությունների մշակման համար:

Այդ մոտեցման հիմքում ընկած է տնտեսական ցուցանիշների համախումբը, որը սահմանում է արտադրանքի մրցունակությունը՝ դրա ծեռքբերման և շահագործման ժամանակ:

Նկատենք, որ ծեռնարկության մրցունակության գնահատականը շուկայում սպառողն իրականացնում է միջնորդավորված տվյալ արտադրողի արտադրանքը գերադասելով նրա մրցակցի արտադրանքից: Նետսարար ծեռնարկության ընդհանրական շուկայական մրցունակությունը նրա արտադրանքների ընդհանրական մրցունակությունն է: Նետսարար մրցունակության գնահատումը ապրանք արտադրողին հետաքրքրում է և օգտակար է մրցակցային ռազմավարություն մշակելու և լավագույն արդյունք ստանալու համար:

Դակա է նշել, որ ծեռնարկության մրցունակության գնահատման ընդհանրական մեթոդաբանությունը ներկայումս բացակայում է, քանզի ծեռնարկության մրցակցային դիրքը գնահատելու համար պետք է քանակապես որոշել, թե հաջողության հասնելու յուրաքանչյուր կարևոր գործոններից (մրցակցություն) որոնք են նրա տիրապետության տակ:

Ռազմավարական կառավարման տերմինաբանության մեջ հաջողության հասմելու կարևոր գործոնների ցանկը, ըստ Ա. Ստրիկլենդի և Ս. Տոմպսոնի, ներառում է.

- ապրանքի որակը և սպառողական բնութագիրը,
- հեղինակությունը կամ իմիջը,
- արտադրական հնարավորությունները,
- առաքման համակարգը (դիլերային ցանցը),
- մարքեթինգը և գովազդը,
- ֆինանսական կայունությունը,
- ծախքերի համեմատական մեծությունը,
- սպառողների սպասարկում (սերվիսը) և այլն:

Մեթոդաբանական տեսակետից ծեռնարկության մրցունակության գնահատման համար կարևոր նշանակություն ունի մրցակցային առավելության հասմելու կարևոր գործոնների ցանկի ծևավորումը, որոնք սովորաբար սահմանվում են մասնագետների, տնտեսագետների և ծեռնարկության ղեկավարների կողմից: Այդ գնահատականը իրականացվում է 10 բալանց սամողա-

կով: Այնուհետև մրցունակության ընդհանուր վարկանիշը ստանալու համար որոշվում են յուրաքանչյուր մրցակցի անհատական վարկանիշի միջին գումարը կամ յուրաքանչյուր գործոնի կշիռը:

Զեռնարկությունը, որն ունի ամենաբարձր ընդհանուր վարկանիշը, պահովում է ամենակայուն մրցակցային դիրքը:

Ուստի որքան մեծ է ձեռնարկության և նրա մրցակիցների ընդհանուր վարկանիշների տարբերությունը, այնքան մեծ է նրա մրցունակությունը:

Տվյալ մոտեցման առավելությունները, կապված գործոնների տարբերակման հետ, մեր կարծիքով, պատասխանում է այն հարցին, թե ինչպիսի ծախսերով է ստացվում նման արդյունք: Ստացված արդյունքի և կատարված ծախսերի համեմատությունը թույլ է տալիս արտադրողին գնահատել իր ընտրած մարդերին զայն ռազմավարության արդյունավետությունը:

Այսպիսով՝ ձեռնարկության մրցունակությունը մի համեմատական բնութագիր է, որն արտացոլում է տվյալ ձեռնարկության զարգացման գործնարարության առավելությունն իր մրցակիցներից ինչպես սպառողների պահանջմունքների բավարարման մակարդակով, այնպես էլ արտադրատնտեսական գործունեության արդյունավետությամբ: Տվյալ բնորոշումից հետևում է, որ ձեռնարկության մրցունակությունն իր մեջ ներառում է ինչպես արտադրանքի (ծառայությունների) մրցունակության ընդհանրական ցուցանիշը, այնպես էլ գործունեության տնտեսական արդյունավետությունը:

Արտադրանքի մրցունակության մակարդակը անհրաժեշտ է դիտարկել ձեռնարկության կողմից թողարկվող բոլոր արտադրատնտեսակների համար

$$J_t = \sum J_i x \varphi,$$

որտեղ՝  $J_i$ -ն ի-րդ արտադրանքի մրցունակությունն է,  $\varphi$  -ն որոշակի ժամանակահատվածում ի-րդ արտադրանքի տեսակարար կշիռն է ձեռնարկության կողմից թողարկվող ամբողջ արտադրանքի ծավալի մեջ:

Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա հարկ է նշել, որ արտադրության արդյունավետության գնահատումը կարելի է բնութագրել արտադրված արդյունքի և ծախսերի հարաբերակցությամբ: Արդյունքները և ծախսերը չափվում են բնեղեն, աշխատանքային և արժեքային արտահայտությամբ: Արդյունքները հանդես են զալիս տարբեր ծներով՝ մրցունակ արտադրանքի ստեղծման, թողարկվող արտադրանքի ծավալի աճով՝ պայմանավորված իրացումից հասույթով, նոր արտադրատնտեսակների քանակով:

Նշենք, որ ամեն մի ձեռնարկության գործունեության արդյունավետութ-

յունը որոշելիս ստեղծվում է ցուցանիշների՝ իրենց հատուկ համակարգ՝ ելնելով ունեցած տեղեկատվություններից և տնտեսական արդյունավետության բարձրացնան խթաններից:

#### Աղյուսակ 1

##### Ձեռնարկությունների տնտեսական կարողությունը բնութագրող հիմնական ցուցանիշները

(ըստ ընտրանքային երեք ձեռնարկությունների)

Հ / Յ	Ցուցանիշների անվանումը	Չ/Ը	Ձեռնարկություններ		
			«Զուլակեմ-տրոն» ԲԲԸ	«Ամաստ» ԲԲԸ	«Ինտերստանկ» ԲԲԸ
1	Թողարկված արտադրանքի ծավալ	հազ. դր.	471990	115200	165436
2	Իրացումից հասույթ	հազ. դր.	471971	114909	165436
3	Զուտ շահույթ	հազ. դր.	59135	3679	4178
4	Ակտիվներ	հազ. դր.	1365289	994480	132850
5	Իրացնան շահութաբերություն	%	12.5	3,2	2,5
6	Սեփական կապիտալի շահութաբերություն	%	6.7	0,6	4,3
7	Գործարար ակտիվներուն	պտույտ	0.34	1,16	1,27
8	Արտադրական հզրությունների գործակից	միավոր	75.0	83,4	82,7
9	Ապրանքային անվանացանկի ընտրություն	տեսականի	4	45	12
10	Արտադրողականություն	հազ. դր.	3403,6	1484,3	1855,5
11	Բարձրորակ արտադրանքի տեսակարար կշիռը թողարկված ապրանքի ընդհանուր ծավալի մեջ	%	76,0	95,2	86,0
12	Նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում	%	10,2	34,0	11,6
13	Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսեր	մակարդակը	0,83	0,95	0,97

Տեսությունում և պրակտիկայում առանձնացվում են ձեռնարկության գործումեռության արդյունավետության որոշման մասմավոր և ընդհանրացնող ցուցանիշներ: Ելնելով ցուցանիշների համակարգերի ծասկորումից կարելի է այն հանգեցնել հետևյալին.

1. Անհրաժեշտ է արդյունավետության մասնակի ցուցանիշներում ցույց տալ առանձին արտադրանքի ընթացիկ ծախսերը:

2. Անհրաժեշտ է հաշվարկել կապիտալի ծախսերի արդյունավետության մասնակի ցուցանիշները՝ ըստ առանձին արտադրական ստորաբաժանումների:

3. Նպատակահարմար է ընտրել ընթացիկ ծախսերի արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշներ՝ ըստ բոլոր արտադրատեսակների և ծեռակալության գործունեության տեսակների:

4. Անհրաժեշտ է ծևակերպել արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշներ գույքի օգտագործման համար:

5. Անհրաժեշտ է ճիշտ ընտրել ծեռնարկության գործունեության արդյունավետության չափանիշը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ժամանակաշրջանի համար:

Մեր կարծիքով՝ այդպիսի չափանիշներ կարող են հանդիսանալ արտադրական համակարգերի արտադրողականությունը (արդյունավետությունը) և ծեռնարկության զուտ շահույթը:

Ակնհայտ է, որ ծեռնարկության մրցունակության վերլուծությունը ներառում է նաև ֆինանսական դրության ուսումնասիրությունը, ակտիվների կառուցվածքը, այն է՝

- բաժնետոմսերի շուկայական գինը,
- ներդրումային ռեսուրսները,
- դրամական հոսքերը,
- վաճառքի ծավալների հարաբերությունը օգտագործվող ակտիվներին,
- իիմնական և շրջանառու կապիտալի հարաբերակցությունը,
- նոր ներդրումներից շահույթը,
- սեփականության չափը,
- շահաբաժնների մեծությունը և այլն:

Ցուցանիշների դիտարկած համախումբը բազմակողմանիորեն բնութագրում է արտադրական գործընթացի բազմանույթ արդյունքները: Դրա հետ մեկտեղ պրակտիկայում նշված ցուցանիշների կառավարումը նպատակահարմար է հանգեցնել մեկ ընդհանուր չափանիշի: Սակայն այդ չափանիշի ընտրությունը ներկայում կապված է որոշակի դժվարությունների հետ, քանի որ լուծված չեն մի շարք տեսական և մեթոդական հարցեր:

Տնտեսական պրակտիկայում ոչ արտադրողականությունը, ոչ շահութաբերությունը, և ոչ էլ ընդհանուր ծախսերի արդյունավետությունն առանձին

Վերցրած չեն բնութագրում արտադրության արդյունավետությունը, չնայած նրան, որ դրանք պրակտիկայում սերտ փոխկապակցված են և մեկի աճը պայմանավորված է մյուսներով: Մյուս կողմից՝ ծեռնարկության մրցակցային դիրքի բարելավումը շուկայական տնտեսության պայմաններում պահանջում է, որ այն իր տրամադրության տակ գտնվող պաշարները օգտագործի արդյունավետ կերպով: Յետևարար ծեռնարկության գործունեության արդյունավետության փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցությունը գնահատելիս, մեր կարծիքով, նպատակահարմար է կիրառել արտադրության արդյունավետության ինտեգրալային ցուցանիշը, որը բնութագրվում է բողարկված արտադրանքի կամ նատուրալ ծառայությունների ծավալի և ծախսված ռեսուրսների հարաբերությամբ: Նշված հարաբերությունը, որով հնարավոր է գնահատել ծեռնարկության գործունեության արդյունավետությունը, բխում է արդյունավետության բուն եռթյունից, որը հանգում է տրված ծախսների դեպքում առավելագույն արդյունքի ստացմանը, որը կարելի է որոշել հետևյալ բանաձևով:

$$J_{\exists} = \frac{\Pi_{\sum}}{3_{\sum}} \rightarrow \max ,$$

որտեղ՝  $J_{\exists}$  -ն արդյունավետության ինտեգրալային ցուցանիշն է,

$\Pi_{\sum}$  -ն ստացված արդյունքն է,

$3_{\sum}$  -ն տվյալ արդյունքն ապահովող տարբեր տեսակի ընդհանրական ծախսներն են:

Դամաձայն այս մոտեցման՝ արտադրության արդյունավետությունը կբարձրանա ի հաշիվ աշխատանքի արտադրողականության, ֆոնդահատույցի, նյութահատույցի, արտադրանքի որակի բարձրացման և բողարկվող արտադրանքի վրա կատարված ծախսների նվազեցման:

Չեռնարկության գործունեության արդյունավետության գնահատման համար խորհուրդ ենք տալիս օգտագործել հետևյալ բանաձևը՝

$$J_{\exists} = \frac{Q}{L + M + A} ,$$

որտեղ՝  $Q$  -ն ապրանքային արտադրանքի ծավալն է կամ էլ գուտ շահույթի մեջությունը,

Լ-ն աշխատանքային ծախսումներն են,

Մ-ը նյութական ծախսումներն են,

Ա-ն տարեկան ամորտիֆացիայի մեջությունն է:

Զեռնարկության մրցունակությունը (արտադրության արդյունավետության մասով), համեմատած մոտակա մրցակցի հետ, կարելի է գնահատել ըստ արդյունավետության ինդեքսի, այսինքն՝

$$i = J_{\alpha} / J_{\text{պրզ.}} :$$

Առաջարկված մեթոդով մրցունակության գնահատման համար տեղեկատվական աղբյուր են ծեռնարկության տարեկան հաշվետվությունները:

Նկատենք, որ մեթոդաբանական տեսակետից նպատակահարմար չէ ծեռնարկության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշը որոշել ծեռնարկության կողմից թողարկվող արտադրատեսակների հնդեքսների և գործունեության արդյունավետության ցուցանիշի արտադրյալով, քանի որ այդ ցուցանիշները գտնվում են կորելացիոն կապի մեջ:

Կարծում ենք, որ ծեռնարկության մրցունակությունն ընդհանուր տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$I_{\alpha} = \beta_1 J_t + \beta_2 i_{\alpha},$$

որտեղ՝  $J_t$ -ն ապրանքազանգվածի (կամ արտադրատեսակների) մրցունակության ինդեքսն է,

$i_{\alpha}$  -ն մոտակա մրցակցի հետ համեմատած գործունեության արդյունավետության ինդեքսն է,

$\beta$ -ն կախվածության գործակիցն է:

Այսպիսով՝ նճան մոտեցումը, մեր կարծիքով, հնարավորություն կտա կազմակերպություններին իրականացնելու արդյունավետ մրցակցային ռազմավարություն:

**Բանալի բառեր – շուկա, մրցակցություն, նորամուծություն, ռազմավարություն, որակ, առաջխաղացում, արդյունավետություն, դիվերսիֆիկացիա, նյութահատուց**

## ԳՐԱՎՈՐԱԿԱՆ

1. Алексеева М. М., Планирование деятельности фирмы. Учебно-методическое пособие.- М.: Финансы и статистика, 1997.
2. Клейнер Г. Б., Тамбовцев В. Л., Качалов Р. М., Предприятие в нестабильной экономической среде: риски, стратегии, безопасность.-М.: Экономика, 1997.

## ПРОЦЕСС ВЫБОРА РЕШЕНИЙ КОНКУРЕНТНОЙ СТРАТЕГИИ НА ПРОИЗВОДСТВЕННЫХ ПРЕДПРИЯТИЯХ

С. Г. АМИРХАНЯН

*Кандидат экономических наук, доцент,  
профессор ГГУ*

В. О. АРАКЕЛЯН

*Кандидат экономических наук, доцент*

В статье предпринята попытка разработки стратегии продвижения на рынке продукции, выпускаемой производственными предприятиями. Разработан подход, позволяющий предприятиям обеспечить конкурентное превосходство над ближайшим конкурентом.

## THE PROCESS OF MAKING DECISIONS ON COMPETITIVENESS STRATEGY IN THE INDUSTRIAL COMPANIES

S. G. AMIRKHANYAN

*Doctor of Economics,*

*Associate Professor,*

*GSU Professor*

V. H. ARAKELYAN

*Doctor of Economics,*

*Associate Professor*

The article elucidates the strategy in the progress of selling products made by industrial companies. The article develops an approach which lets companies take priority over the competitor.